# ՏՈՒՐ ՔՈ ԾԱՌԱՅԻՆ ԻՄԱՍՏՈՒՆ ՍԻՐՏ

## ԲԱՆԱԼԻ ՀԱՄԱՐՆԵՐ. 1 Կոր. 12:1-11

*1 Ինչ վերաբերվում է հոգեւոր պարգեւների մասին, եղբայրներ, չեմ ուզում որ չգիտենաք: 2 Գիտե՛ք*
*անշուշտ, որ մինչ հեթանոս <u>էիք,</u> անձայն կուռքերի մօտ էիք տարվում ինչպէս որ առաջնորդվում էիք:*
*3 Նրա համար հայտնում եմ ձեզ, թե ոչ ոք, ով Աստուծո Հոգուց մղված է խօսում, չի կարող ասել.*
*«Նզովյալ լինի Հիսուսը»: Նույնպես էլ ոչ ոք չի կարող խոստովանել, թե՝ «Հիսուսը Տեր է», եթե*
*չունենա Սուրբ Հոգին:*

*4 Թեև* ***պարգեւները (charisma ձրի պարգև)*** *զանազան են լինում, բայց նույն Հոգին է պարգևողը:*
*5 Եվ Զանազան հոգևոր* ***պաշտօններ (****diakonos* ***սարկավագ)*** *կան, այո՛, բայց նույն* ***Տէրն*** *է դրանք*
*բաշխողը: 6 Եւ* ***ներգործութիւնները (գործողությունները)*** *զանազան են, բայց նույն* ***Աստուածն*** *է*
*դրանք տալիս յուրաքանչյուրին:*

*7 Բայց Սուրբ Հոգին ամեն մէկի մեջ տարբեր ձևով է հայտնվում ընդհանուրի օգտի համար:*
*8 Այսպես, Սուրբ Հոգին մէկին տալիս է* ***իմաստությամբ*** *հորդորելու կարողություն, միյուսին*
***գիտության*** *խօսք՝ նույն Հոգուց: 9 Միյուսին* ***հավատք*** *նույն Հոգով, միյուսին* ***բժշկության*** *պարգեւներ*
*նույն Հոգով: 10 Ուրիշին* ***զօրավոր*** *գործերի կարողություններ, միյուսին* ***մարգարէություն****, միյուսին*
***հոգիները զանազանելու*** *շնորհ, միյուսին տեսակ-տեսակ* ***լեզուներով*** *խոսելու շնորհ, միյուսին*
*լեզուների* ***թարգմանության*** *շնորհ: 11 Բայց այս ամենը հէնց միեւնոյն Հոգին է առաջացնում և*
*բաժանում յուրաքանչյուրին՝ ինչպէս որ կամենում է:*

**ՀԱՐՑ: ԵԹԵ ՏԵՐԸ ՁԵԶ ՀԱՐՑՆԵՐ, ԱՅՍ ՊԱՐԳԱՆԵՐԻՑ ՈՐ ՄԵԿԸ ԿՆԱԽԸՆՏՐԵԻՔ ՈՒՆԵՆԱԼ:**
***If the Lord ask you, which one of these gifts would you prefer to have?***

***Եփ. 1:17 - 17 Որ մեր Տէր Յիսուս Քրիստոսի Աստուածը՝ փառքի Հայրը ձեզ տա իմաստության եւ***
***հայտնության հոգի՝ իր գիտությունով.***

***Կող. 1:9 - Նորա համար մենք էլ այն օրից երբ լսեցինք, չենք դադարում ձեզ համար աղօթելուց եւ Աստծուն աղաչանքներ մատուցելուց որպեսզի լցվեք նորա կամքի գիտությամբ, ամեն իմաստությունով եւ հոգեւոր հանճարով.***

## I. ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՏԱԼԻՍ Է ԻՄԱՍՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԻ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ: THE HOLY SPIRIT GIVES WISDOM, KNOWLEDGE AND ABILITY OF SPEECH.

*3 Թագ. 3:3-15 - 5 Գաբաւոնի մէջ Տէրը երեւաց Սողոմոնին գիշերը երազում, եւ Աստուած ասեց.*
*Խնդրիր թէ քեզ ինչ տամ:*

*Ուրեմն* ***տուր քո ծառային իմաստուն սիրտ (ոչ թե միտք – իմաստուն սրտից են դուրս գալիս հանճարեղ***
***մտքեր)*** *քո ժողովրդին դատելու* ***(ճիշտ որոշում կայացնելու)*** *բարիի ու չարի մէջտեղը ջոկելու. Որովհետեւ*
*ո՞վ է կարող քո այս մեծ ժողովրդին դատել: 10 Եւ այս խօսքը, որ Սողոմոնն այս բանը խնդրեց, հաճոյ*
*երևաց Տիրոջ աչքին: 11 Եւ Աստուած ասաց նորան. Որովհետեւ դու այդ բանը խնդրեցիր եւ քեզ*
*համար չխնդրեցիր շատ օրեր, եւ քեզ համար չխնդրեցիր հարստություն եւ չխնդրեցիր քո թշնամիների*
*կեանքը, այլ քեզ համար* ***դատ լսելու իմաստութիւն խնդրեցիր:*** *12 Ահա քո խօսքի պէս պիտի*
*անեմ, ահա ես քեզ իմաստուն եւ հանճարեղ սիրտ տվի, որ քեզանից առաջ քեզ նմանը եղած չէ, եւ*
*քեզանից հետո էլ քեզ նմանը վեր չի կենա: 13 Ու նաեւ քո չուզածն էլ տվի քեզ, հարստություն էլ,*
*փառք էլ, որ քեզ նման մի մարդ չի լինի թագաւորների մէջ քո բոլոր օրերում: 14 Եւ եթէ գնաս իմ*
*ճանապարհներում, որ իմ պատուիրանքներն ու հրամանները պահես ինչպէս որ գնաց քո հայր*
*Դաւիթը,* ***այն ժամանակ քո օրերը կերկայնացնեմ:*** *15 Եւ Սողոմոնը զարթնեց, եւ ահա երազ էր.*

- **Սողոմոն թագավորը լավ սկսվեց, բայց վատ ավարտվեց:**

*3 Թագ. 4:30-34 - 30 Եւ Սողոմոնի իմաստութիւնը բոլոր արեւելցիների իմաստութիւնից եւ բոլոր Եգիպտոսի իմաստութիւնից շատ էր: 31 Եւ նա ամեն մարդից իմաստուն էր... 32 Եւ նա երեք հազար առակ խօսեց, եւ նորա երգերն էին հազար ու հինգ: 33 Եւ խօսեց ծառերի վերայ՝ Լիբանանի եղեւինից մինչեւ պատի վերայ բուսնող զոպան, նաեւ խօսեց կենդանիների եւ թռչունների եւ զեռունների ու ձկների վերայ: 34 Եւ ամեն ազգերից գալիս էին Սողոմոնի իմաստութիւնը լսելու, երկրիս ամեն թագաւորներիցը, որ լսում էին նորա իմաստութիւնը:*

- **Եթե Նա այդքան իմաստուն էր, ինչու՞ Նա լքեց Աստծուն:**

*3 Թագ. 11:4,9 - 4 Եւ եղավ Սողոմոնի ծերության ժամանակ որ նորա կանայք դարձրին **նորա սիրտը** ուրիշ աստվածների ետեւից, եւ **նորա սիրտը ուղիղ չէր** իր Տէր Աստուծո հետ ինչպէս իր հայր Դավիթի սիրտը: 9 Եւ Տէրը բարկացավ Սողոմոնի վրա, որ **իր սիրտը ծռեց** Իսրայէլի Տէր Աստծուց...*

***Առակ. 4:23 - Ամենայն զգուշությամբ պահիր և պահպանիր քո սիրտը, որովհետև նորանից է բխում կեանքի ելքը (աղբյուրը):***

***Սիրաք 11:30 – Մարդու վախճանից առաջ երանի մի՛ տուր նրան. Քանի որ մարդ ճանաչվում է իր կյանքի ավարտով:***

## II. ԻՄԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍԱՆԵԼԻ Է ՄԻԱՅՆ ՆՐԱՆՑ ՀԱՄԱՐ, ՈՎՔԵՐ ԽՆԴՐՈՒՄ ԵՆ ՆՐԱՆ: WISDOM IS AVAILABLE ONLY TO THOSE WHO ASK HIM FOR IT.

*Հակ. 1:5 - Բայց եթէ մէկը ձեզանից իմաստութեան պակասութիւն ունի թող խնդրէ Աստուածանից, որ ամենին տալիս է առատութեամբ եւ չէ նախատում, եւ կ՚տրուի նորան:*

***Illustration: Family, Ministry, Carrier...***

*Դան. 2:20-22 - 20 Դանիէլը խօսեց եւ ասեց. Օրհնեալ լինի Աստուծո անունը հավիտենից մինչեւ հավիտեան, որ **իմաստությունը եւ զօրությունը նորանն է:** 21 Եւ նա է ժամանակները եւ ժամերը փոխողը, թագաւորներ իջեցնողը եւ թագաւորներ դնողը. **նա է տալիս իմաստութիւն իմաստուններին,** եւ **հանճար՝ գիտնականներին:** 22 Նա է խոր եւ ծածուկ բաները հայտնողը, որ գիտի մթի մէջ եղածը, եւ լոյսը նորա հետ է բնակվում:*

*Դան. 1:17 - Եւ Աստուած այս չորս երիտասարդներին գիտություն եւ հանճար տվեց ամեն տեսակի դպրութեան եւ իմաստության մեջ, եւ Դանիէլը հասկանում էր ամեն տեսիլք եւ երազ:*

- **Իմաստությունը Պողոսի Առաքյալի համար առաջնային էր:**
  **Wisdom was a priority for Paul.**

*2 Պետ. 3:15 - 15 Եւ մեր Տիրոջ երկայնմտութիւնը փրկութիւն համարեցէք. Ինչպէս մեր սիրելի եղբայր Պօղոսն էլ Աստուածանից **իրեն տրված իմաստութեան** պէս գրեց ձեզ:*

## ԱՄՓՈՓՈՒՄ

- **Ինչպե՞ս կարող ես իմաստություն ձեռք բերել:**

**Իմաստության Գրքեր. (Յոբ, Առակաց, Ժողովող - Սողոմոնի իմաստությունը, Սիրաքի)**

***Գոյություն ունեն երկու տիկնայք, ովքեր պայքարում են այն որդու ուշադրության համար, որը գրված է Առակաց գրքում:***

*Առակ. 1:5 - Թող լսէ իմաստունը եւ աւելացնէ ուսումը, եւ բանիմացը վարժութիւն ստանայ:*

- **Խնդրիր երկնային Իմաստությունը:**
  **Seek for Heavenly Wisdom.**

*Յակ. 3:13-17 - 13 Ձեր մէջ ո՞վ է իմաստուն եւ խելացի, թող նա բարի վարքով ցոյց տայ*
*իմաստությամբ և հեզությանբ կատարած իր գործերը: 14 Բայց եթէ դառն նախանձ եւ*
*հակառակություն ունեք ձեր սրտերում, մի պարծեցէք եւ սուտ մի ասէք ճշմարտութեան դէմ: 15 Այս*
*իմաստութիւնը վերեւից իջած չէ, այլ երկրավոր է, մարմնավոր եւ դիվային: 16 Որովհետեւ ուր որ*
*նախանձ եւ կռիվ կայ, այնտեղ անկարգություն եւ ամեն չար բաներ կան: 17 Բայց վերին*
*իմաստությունը նախ եւ առաջ սուրբ է, եւ հետո խաղաղարար, հեզ, հլու, ողորմութիւնով եւ բարի*
*պտուղներով լիքը, անկողմնասէր, անկեղծ:*